

ուրախութեամբ ու գոհունակութեամբ լե-  
ցուց Վսեմ. փաշային բազմաթիւ բարե-  
կամեանքն ու համակրեանքը: Կորին Վսեմու-  
թիւնը զանազան առիթներով արժանացած  
է կայսերական բարձր գնահատման և ըն-  
դունած է Ա. Մէճիտիէի ականակուռ, Ա.  
(Օսմանիէի) ականակուռ, Լիազաթ ոսկի  
շքադրամ, Խֆթիխար ականակուռ և ուրիշ  
տէրութեանց բազմաթիւ շքանշաններ:

Վսեմ. Յովհաննէս Սազըզ պէտք չէ  
նկատել իբր միայն պետական մարդ, այլ  
նաեւ տաղանդաւոր գրիչ և համբաւեալ  
լեզուագէտ: Ի տղայ տիոց սիրող և մշա-  
կող եղած էր մեր նախնեաց լեզուին և  
գրականութեան և մինչեւ ցայսօր այդ  
գրական պատուաբեր ասպարէզը չենք  
կրնար անջատել իր քաղաքական գործ-  
նեայ կեանքէն: Մեր հին լեզուին այնքան  
տիրացած էր՝ որչափ նորին: Իր հայե-  
րէնի կարող և բազմահմուտ ուսուցիչը,  
Հ. Գաբրիէլ վրդ. Ալվազովսքի, իր յաջող  
աշակերտին գրաբարի ճոխ և գեղեցկա-  
հիւս նրբութիւններն հաղորդելէն զատ՝ իր  
ծանօթ քերթողական խանդէն կայծեր դրեր  
էր անոր մէջ, որոնց իբր ապացոյց՝ ի  
միջի այլոց՝ կ'արտատպենք հոս 1850  
տարւոյ «Բազմավէպ»ին մէջ տպուած իր  
մէկ գողտրիկ ոտանաւորը, դպրոցական  
երկրորդ տարեշրջանին գրուած. հետու  
ծնողական զգուանքէ ու խանդաղատանքէն՝  
մտաց մէջ կ'օրօրուէր սիրակաթ մօրը ա-  
նուշ մեղեդիներու յանկերգը:



ՄԱՅԻ ԵՒ ՄԱՆՆԻ ԽԷ

Գեղեցկահիւս յորանի  
Նընջէր մանուկ գեղանի.  
Մօր քո միակ յոյս չընադ  
Նընջեալ մանկիկն ընդ ծիծաղ:

Մայրն առ նովալ գրիւակոր  
Խընօտ ի ծղիւսն յետոր.  
Եւ հիանայր իբր ի կախ  
Նընջէր մանկիկն ընդ ծիծաղ:

Յառեալ դիտէր սիրասուր  
Հայեցուածով յորդին իւր.

Դիտէր ժըպտէր մայրն ուրախ  
Նընջէր մանկիկն ընդ ծիծաղ:

Եւ ի շրթանց թուցեալ սէր  
Որ ի սըրտին կայր՝ ասէր.  
Նընջեալ քաղցրիկ՝ քաղցր ի քուն  
Անքուն զուարթնոց ի հանգոյն:

Ջիճն հատուցից ով Աստուած,  
Ընդ պարզեւիդ գերապանծ.  
Քեզ նըրեմ զիմ մանկիկ,  
Այլ դու Նընջեալ աստ այծմիկ:

Ո՛հ, քեզ, զհայցուած քո, ով կին,  
Տարան հրեշտակ ի յերկին,  
Եւ քաղցրացաւ ձօնիդ յոյժ,  
Այլ քեզ մանկիկ նինջ անոյշ:

Յայնժամ սրովքէ լուսալից  
Իջեալ անդէն ի յերկին՝  
Մերձ ի յորանն հասանէ.  
Ձի՛ խնդրես, ո՛ սիրովքէ:

« Մանուկդ որ ինձ նըմանիս  
Ատէր, ո՛ն եկ դու ընդ իս,  
Եկ և ընդ քեզ համազոյզ  
Մինչեւ յերկինըս թոնցուք:

Ջալիարհ, լլցցաւ թող ի բաց,  
Քանգի ի թիւս հրեշտակաց  
Պիտի մանկիկ մի յերկին,  
Ե՛կ և լըցցես ըզթերին »:

Եւ զծինափայլն իւր ըզթիւս  
Շարժեալ հրեշտակն ըզթեթիւս,  
Թըռեաւ... ո՛ մայր, ո՛հ, եղուկ  
Վա՛հ քեզ, մեռաւ քո մանուկ:



Այս ճրչափ սիրոյ կիրք, բառերու որ-  
պիսի ճաշակաւոր ընտրութիւն, ինչքան  
ճոխութիւն յանգերու, և ճրքան գորովա-  
լից շեշտեր խանդակաթ մօրն՝ մանկիկին  
մնարին մօտ կայնած: Մայր մ'ըլլալու էր  
կարենալ զգալու համար այդքան խան-  
դաղատանք և գորով: Պանդուռուած ի-  
մաստ մը չկայ հոն, պարզ սրտի մը և  
կոկիկ մտքի արտադրութիւնն է, զոր որ-  
չափ կարդաս, այնչափ կ'ախորժիս:

Տեսէ՛ք այդ ալիւր պետական մեծ մար-  
դը, որ տարիներու երկար շարքին ներքեւ  
դեռ չէ կըած, իր պատկառելի դէմքին  
վրայ կը կրէ ազնուութեան կնիքը, ա-  
ռանց բան մը պակսեցնելու յարգանքէն,

և աչքերուն մէջ աշխոյժ ցուրը՝ պատկեր իր խոհական մտաց, իր անպաճոյճ և անսխեթեւեթ վարմունքովը, առաջին տեսութեամբ իսկ կը դիմէ՛ զգե՛ն, և բուն տենչ մը կը զգաս մաղթելու իրեն ղեռ երկար տարիներ՝ իր թանկագին ծառայութիւններ նուիրելու պետութեան ու Ազգին, միոյն հաւատարիմ ու անձնուէր պաշտօնեայ, միւսին հարազատ զաւակ:

Ույն կենսագրական հակիրճ տողերու վերջ տալէ առաջ, անշուշտ պիտի ներուի մեզ յիշել նաեւ իւր հարազատն, Ազնուշուր Արմենակ Պէյ Սազըզ, որ հորամոյն բարեմասնութիւններով ստուած և յարգուած դէմք մ'է, և որուն համար ամէն գովեստէ վեր է ըսել՝ այնպիսոյ հօր պաշազատ և նազելի շատաւիղ:

Հ. ՍԱՏԱ ՏԵՐ-ՄԱԳՍԵՆԻԱՆ

կ. Պոլիս 1 Յունուար 1908

## ՀԱՅԵԱՆԱՆ ԳԵՂԱՐԻՆԻՆԵՍԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԼԻՆ ՄԵՋ

Խոտլական Emporium ամսաթերթին մէջ որ կը հրատարակուի Պերգամոն՝ և կը գրադիր պրակտիկութեամբ և գեղարուեստով և վերջեւ նունը հետեւեալը՝ մեր հանրածանօթ նկարչին՝ Պ. Շահինի նկատմամբ: Փննադատն է Vittorio Pica, Խոտլացի երկրասարգ գրագէտ մը՝ որուն համբաւը հետզհետէ կը մեծնայ իր երկրին մէջ, և որ առանձին համակրանք կը խօսի միշտ հայ ազգին վրայ:

« Յետ ըմբոշանելու Ռոպերթ Կոֆֆի նկարչական և վիպական տեսիլքը և յետ զարմանալու Ֆրանսուա Մարեշալի առարկայական ճշգրտութեան վրայ, մեծապէս հաճոյ կ'անցնի մեզ իբրեւ հակապատկեր՝ զգացման տեսիլքը, որուն մէջ արուեստագէտը արուեստաւորէն անօրինակ կերպով գերազանց կը հանդիսանայ: Թոսկանայի, Ամպրիոյ և Վենետիկ քանի մ'անկիւններ կը ներկայացնէ մեզ Էտկար Շահինի իւր յստիւ ժանտաշուրերուն ալբոմին մէջ զոր Impressions d'Italie ամենապարզ վերնագրին տակ՝ Էտին Սահիոյ Բարիզցի ամենածանօթ տպագրիչը հրատարակեց անցեալ Դեկտեմբերին:

Անցեալ ամառ քաջ հայր՝ յոգնածութեան, տառապանքի և վնասութեան շրջանի մը մէջ՝ որ ընտանեական սուգէ մը յարաջ եկած էր և որ իրմէն վերցուցած էր աշխատութեան ամէն կամք,

և իրեն հակադիրքի՝ մինչեւ իսկ ատելի դարձուցած էր Բարիզեան կենսաքը, որուն հանձարեղ և սուր դիտողութիւնը այնքան տարի սնոյց և քիչ ժամանակի մէջ արժանապէս մեծ համբաւ առաւ իւր ժամտաշխային, արագաշարժ, հրապուրիչ և իմաստուն գործին՝ մոռանց քիչ մը խաղաղութիւն խնդրի այն Խալիպայէն ուր տասը տարի առաջ սոված էր նկարչութեան սկզբնաղբնը, րը, և յուսով վերստին գտնելու այլուր իւր արուեստին ոչօք և սելը՝ թողուց Ֆրանսան և Թաշահան եկաւ, բերելով իւր հետ՝ գիտագրելու համար՝ սալաքարի, կապարի և գրիչներու փոխքիկ հանդերձանք մը:

Կերպագած բնաւորութիւն, թշուառութիւն միշտ աւելի սրած է իւր զգացումը և աւելի շուշողուն բրած մարդկներու և իրերու այն ցուլացումը՝ զոր իւր բերեքը կը նշուեն իր հոգուն վրայ: և այդ մարդկները և իրեքը զորս նկարեց մետաղին վրայ՝ արագ և հաստատուն ուրուագծերով՝ հանգիստ միայնութեան այն երկու ամիսներուն մէջ զորս ղեռ նոր անցուց մեր երկրին մէջ, յայտնապէս տողորուած կը թուին մեզ իւր գերազանց անձնաւորութեան արուեստագիւտական բնոյթն. իւր Impressions d'Italie շէնրուն մէջ բերուած մէկէն աւելի թոսկանական և Ամպրիական նկարչական դաշտանկարներուն համար կրնանք ձինք վրացի Ամիէլին հետ ըսել որ՝ կը ներկայացնեն հոգեկան վիճակ մը:

Իւր խորապէս թախծեալ հոգւոյն վիճակը թույլ չտուաւ իրեն՝ երբ ինքը Խոտլիա եկաւ՝ աւելի կամ՝ նուազ ազմկուտ և խռոված մեծ քաղաքները երթալ, այլ հրապրեց զինքը լռիկ փողբիկ քաղաքները՝ լի անցեալ փառքի յիշատակներով, ազնուական և քաղցր խորհրդաւորութեամբ և արուեստի փառաւոր գործերով: Շատ չարաթներ անոնց մէջ կեցաւ ինքը բայց իւր մտքին մէջ հարուստութեան մը պայծառ, որոշ և հաստատուն ոչ մէկ ծրագիր ունէր. նկարեց ոչ թէ՛ ամենէն հետաքրքրական և յատկանշական տեսարանները՝ այլ միայն անոնք որ բոլորովին երկրորդական կարեւորութիւն մ'ունենալով հանդերձ՝ այս կամ այն պատճառի համար իւր աչաց ուշադրութիւնը գրաւեց էին և իւր երեւակայութիւնը գրգռած:

Այսպէս Շահին իւր Ալբոմին մէջ Աիէնայէն պիտի գծագրէ միայն ցած կամաբը որ Հրէից թաղին մնեաւոր նրբափողոցի մը վրայ կը բանցուի, Բերուիլայէն խիտ աշտարակներու և քանգակատուններու շրջանկարը՝ տեսնուած մօտակայ բլրան մը բարձունքէն. իսկ Բիզայէն Ս. Նիկոլայայոսի երեքկարգեան սիւներով վայելուչ ճաւկաւոր:

Աւելի երկայն կը բռնեն զինքը իրենց պարիսպներուն մէջ Սան ձեմինիանոսի միշնադարեան լուռ քաղաքիքը. Տանդէ աստուածային դիցազներգութեան մէջ կը գովէ անոր գեղեցիկ աշտարակները. խորհրդական Աստիգը՝ բանաստեղծական եղած՝ դարերու մէջ՝ Ս. Ֆրանչիսկոսի քաղցր յիշատակով, և Մոնդէ - Օլիվէյոյի պատմական մենաստանը, որուն վրայ Թուլ-Պորթէ մեզք այն էջերը որ թիւնեւ իւր Sensations d'Italie հատորին ամենէն գեղեցիկ գլուխը կը կազմեն: